ԱՊՐՈՒՄ ԵՔ ԿԱՂՆԻՆԵՐԻ ՄԵ՞Ջ:

ԻՆՉՊԵ՞Ս ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԿԱՂՆՈՒ ԱՆՏԱՌՆԵՐԸ՝ ՍԿՍԵԼՈՎ ՍԵՓԱԿԱՆ ԲԱԿԻՑ

Հարգելի՛ սեփականատեր,

Մենք քո օգնության կարիքն ունենք: Լոս Անջելեսի վարչաշրջանի լեռները, նախալեռներն ու հովիտները ժամանակին ծածկված են եղել կաղնու վեհաշուք անտառներով: Կաղնու այս անտառները բնիկ ժողովուրդների նախնյաց հայրենիքն են, որոնք մինչ այժմ էլ շարունակում են խնամել ու պահպանել կաղնու անտառները իրենց մշակութային ավանդույթների միջոցով: Այս բուկլետը տեղեկություն է տրամադրում այն բնակիչներին, ովքեր նոր են սկսում գնահատել կամ ապրել կաղնիների շրջապատում. այն ներկայացնում է, թե ինչ օգուտ են տալիս կաղնու անտառները ինչպես մարդկային, այնպես էլ ոչ մարդկային համայնքներին, ինչու են կաղնու անտառները կարևոր Լոս Անջելեսի վարչաշրջանի բնական ժառանգության համար, ինչպես նաև՝ ինչպես կարելի է պաշտպանել, վերականգնել և պահպանել այս հիասքանչ ծառերը բնակելի միջավայրում:

Լոս Անջելեսի մերձակա հովտում աճող կաղնիների մասին Հերման Հերցոգի լանդշաֆտային գեղանկարը, մոտ 1870 թ.: Ռոբերտ Բ. Հոնիմեն կրտսերի հավաքածու Վաղ Կալիֆորնիայի և Արևմտյան Ամերիկայի պատկերային հավաքածու: Բանկրոֆթ գրադարան, Կալիֆորնիայի համալսարան, Բերկլի:

Լոս Անջելեսի վարչաշրջանի ընդհանուր ծրագիրը, որը կարգավորում է վարչաշրջանի հետագա զարգացումը, սահմանում է քաղաքականություն, որով կապահովվի գործող կաղնու և բնիկ անտառների պահպանությունը՝ բացառելով դրանց նվազեցումը: Կաղնիները կանգնած են բազմաթիվ վտանգների առաջ, որոնց թվում են երաշտը, կլիմայի փոփոխությունը և քաղաքաշինական ճնշումները: Կաղնու անտառների պահպանությունն ու շարունակական զարգացումն ապահովելու նպատակով սեփականատերերը կարող են նպաստել գործին՝ պահպանելով գոյություն ունեցող կաղնիները և միաժամանակ պաշտպանելով ու տնկելով նոր կաղնու տնկիներ, որոնք կդառնան ապագայի կաղնու անտառները:



Լուսանկարի աղբյուրը՝ Ռոզի Դագիտ

Լուսանկարի աղբյուրը՝ Ռոզի Դագիտ

Գարնանը շատ բակերում ծլում են կաղնու տնկիներ, որոնք տարածում ու տնկում են սկյուռները, թփուտային կաքավիկները, փայտփորիկները և այլ վայրի կենդանիներ: Տան սեփականատերերը կարող են իրենց մասնակցությունը ունենալ Լոս Անջելեսի վարչաշրջանի՝ կաղնու անտառների կորուստը կանխելու նպատակին՝ կատարելով մի քանի պարզ գործողություններ:

- **Վերախմբավորել շինարարական նախագծերը՝** պահպանելու համար գոյություն ունեցող կաղնիները
- **Թույլ տալ կաղնու տնկիներին աճել** կաղնիների տակ և դրանց շուրջը
- **Ներգրավել կաղնիները** երաշտադիմացկուն լանդշաֆտային ձևավորումներում
- **Շինությունները, մեքենանցուղիներն ու արահետները տեղադրել գոյություն ունեցող կաղնիներից հեռու՝** նվազեցնելու համար արմատների շրջակայքի հողի խախտումները
- **Օգտագործել ծածկանյութ,** որպեսզի պահպանվի հողի խոնավությունը կաղնու տնկիների և երիտասարդ ծառերի շուրջ
- **Պաշտպանել կաղնու տնկիները վայրի կենդանիներից՝** օգտագործելով ծառերի պաշտպանիչ խողովակներ, կաթի տուփեր, և վերգետնյա և ստորգետնյա մետաղական ցանցային ցանկապատեր, որպեսզի կենդանիները չվնասեն դրանք

LA COUNTY PLANNING

Երբ ձեր կաղնու տնկին հասունանա, ձեր բակում կհայտնվեն թռչունների, միջատների և այլ վայրի կենդանիների ավելի բազմազան տեսակներ: Կաղնիները իրենց աճած վայրում էական ազդեցություն են ունենում տեղական էկոհամակարգի վրա: Կաղնիները ծառայում են որպես սննդի և ապաստանի աղբյուր հազարավոր բուսատեսակների, վայրի կենդանիների ու միջատների համար: Դրանք բարելավում են մեր շնչած օդի և մեր խմած ջրի որակը: Դրանք պահպանում են ջուրը ջրահավաք ավազաններում՝ կանխելով հողի չորացումը, համալրում են ստորգետնյա ջրերը, օգնում են կայունացնել հողը և կանխել էրոզիան, նվազեցնում են օդի և հողի ջերմաստիճանը, ապահովում են զովացուցիչ ստվեր, ինչպես նաև բարելավում են տեսարանները և բարձրացնում անշարժ գույքի արժեքը: Բացի այդ, կաղնու որոշ տեսակներ ունեն կրակադիմացկուն հատկություններ և, եթե պահպանվեն Լոս Անջելեսի վարչաշրջանի Հրշեջ ծառայության ու Քաղաքաշինության բաժնի ցուցումներին համապատասխան, կարող են կանխել կայծերի միջոցով շինությունների բռնկումը:

ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆ ԿԱՂՆԻՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Կալիֆորնիական քույր (*Adelpha californica*)

Լուսանկարը՝ © 2007 Ռոն Վոլֆ Բոլոր իրավունքները պաշտպանված են

Արևմտյան վագրային շլթկաբազե (*Papilio rutulus*)

Լուսանկարը՝ © 2011 Քրիստոֆեր Լ. Քրիստի

Կաղինակեր փայտփորիկ (*Melanerpes formicivorus*)

Լուսանկարը՝ Հեյլի Կրյուզ

Ոսկեգույն որսորդի մազաշար թիթեռ (*Satyrium auretorum*)

Լուսանկարը՝ © Քրիս Մալորի

Կալիֆորնիական թփուտային կաչաղակ (*Aphelocoma californica*)

Լուսանկարը՝ Քրիս Օռ / Մեծ բակային թռչունների հաշվարկ

Նաթոլի փայտփորիկ (*Picoides nuttallii*)

Լուսանկարը՝ Միք Թոմփսոն

Լուսանկարը՝ Ռոզի Դագիս

Կլիմայի փոփոխությունը դանդաղեցնելու համար անհրաժեշտ է նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները: Կաղնիները ունեն խիտ փայտ, որն ունակ է կլանել կամ «կապել» ավելի շատ ածխածին, քան շատ այլ տեսակի ծառեր: Կաղնու ծառերը կարող են ապրել երկար դարեր և այդ ընթացքում շարունակաբար կլանել ու պահպանել ածխածինը: Երբ հասուն կաղնիները հատվում են, դրանց և հողի մեջ կուտակված ածխածինը սկսում է կրկին արտանետվել մթնոլորտ, նորից նպաստելով կլիմայի փոփոխությանը: Սա ևս մեկ հիմք է, թե ինչու հասուն կաղնիների պահպանումը հավասարապես կարևոր է, ինչպես նոր կաղնիների տնկումն ու պահպանումը:

Լոս Անջելեսի վարչաշրջանում կաղնու ծառերը հատուկ կանոնակարգով վերահսկվում են: Ժամանակ խնայելու և տուգանքներից զերծ մնալու արդյունավետ եղանակներից է կաղնիների ներառումը ձեր նախագծման փուլում և դրանք հատելուց խուսափելը: Կաղնու ծառի հատման կամ դրա տարածքի խախտման համար անհրաժեշտ է ստանալ կաղնու ծառի թույլտվություն: Թույլտվություն տրամադրելու գործընթացը ներառում է խորհրդատվական հանդիպում նախագծողի հետ՝ օգնելու համար նախագծի տեղակայման և ձևավորման հարցում, որպեսզի կանխվեն կամ նվազեցվեն կաղնիների վրա ազդեցությունները: Կաղնու ծառերի թույլտվությունների տրամադրումը ավտոմատացված չէ և կարող է ներառել հրապարակային լսում՝ կաղնիների վրա ցանկացած ազդեցության դեպքում: Փոխհատուցման միջոցները կարող են ներառել նոր կաղնու ծառերի տնկում՝ թույլատրված հատումների կամ ազդեցությունների փոխհատուցման նպատակով: Փոխհատուցման միջոցները կարող են ներառել նաև կաղնու ծառի արժեքի գնահատում և այդ գումարի վճարում կաղնու պահպանության հիմնադրամին՝ ապահովելու համար, որ Լոս Անջելեսի վարչաշրջանում կաղնու անտառների կորուստ չլինի:

Լոս Անջելեսի վարչաշրջանի կաղնու անտառների պահպանությունն ու վերականգնումը կարող է սկսվել հենց ձեր սեփական բակից: Գոյություն ունեցող կաղնիների պահպանմամբ, ինչպես նաև նոր կաղնու տնկիների պաշտպանությամբ ու տնկմամբ դուք կարող եք արդեն այսօր դառնալ ԿԱՂՆԻՆԵՐԻ ՊԱՀԱՊԱՆ:

Կաղնու ծառերի կարևորության և օգտակար հատկությունների, ինչպես նաև Լոս Անջելեսի վարչաշրջանում դրանց պահպանման միջոցների մասին ավելին իմանալու համար, ներառյալ Սանտա Մոնիկայի լեռների տեղական ափամերձ ծրագրի և Սանտա Մոնիկայի լեռների հյուսիսային գոտու ծրագրի կանոնակարգերը, կարող եք կապ հաստատել մեզ հետ՝

OAKTREE@PLANNING.LACOUNTY.GOV
BIT.LY/OAKTREEPROGRAM
(213) 974-6411

LA COUNTY PLANNING